ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ

Կ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեծ է Ներսես Աշտարակեցու դերը Արևելյան Հայաստանը պարսկական դարավոր լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործում։

Այս առումով առավել հատկանշական է վիրահայերի առաջնորդության տարիներին նրա գործունեությունը։ 1814 թ. գալով Թիֆլիս, Աշտարակեցին չդադարեց մտածել Արարատյան աշխարհի մասին, նրա ազատագրման հույսը կապելով ռուսական արքունիքի հետ։ Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին ուղարկած մի նամակով նա խնդրում է վերջինիս՝ ջանք չխնայել էջմիածնի ազատության համար, ու եթե առայժմ անհնար է այդ, ապա «գոնէ վասն Աթոռոյն մի խնայեսցէ աստուածանման հզօր Կայսրն զիւր հզօր թևոց հովանաւորութիւնն յատուկ դաշնակցութեամբ զյատուկ հրամանագիր զիւր վասն ապահովագրութեան Աթոռոյն և աթոռայնոց առաքեալ առ շահն և առ շահզատայն»[1]։

Ներսեսը թեև էջմիածնում չէր, սակայն տեղյակ էր աթոռի անց ու դարձին, միշտ իր խորհուրդներով ու առաջարկներով օգնում էր կաթողիկոսին։ Այսպես, օրինակ, 1816 թ. հուլիսի 8-ին կաթողիկոսին հղած մի գրությամբ նա հայտնում էր, որ Վրաստանի նոր կառավարչապետ Երմոլովը շուտով դիվանագիտական գործերով Պարսկաստան է ուղևորվելու, և խորհուրդ է տալիս պատշաճ ընդունելություն ցույց տալ[2]։

Իրոք, 1817 թ. ապրիլին Երմոլովը մի առաքելությամբ Պարսկաստան է ուղևորվում, ճանապարհին նրա դեսպանության անձնակազմը ջերմորեն հյուրընկալվում է էջմիածնում։ Այդ կապակցությամբ դեսպանության անդամ Ալեքսանդր Խուդաբաշյանը գրում է. «...Իրաւի յոյժ պատուով և վայելչապէս ընկալաւ զմեզ սրբազնագոյն վեհն, և եթէ ինքն գերազանց դեսպանն՝ նոյնպէս և ամենայն ընկերակիցք իմ, այնքան ջատագով և գոհունակ եղեն՝ մինչև ոչ կարեմ բացայայտել ձեզ զգացողութիւն իւրեանց։ Այսպիսի բարեյաջող առիթ բաւականութեան մեծաւորի իմոյ, գիտէ սրբազանութիւն ձեր ըստ ազգասիրութեամբ իմոյ՝ որքան ախորժելի էր ինձ»[3]։

Ունենալով ռուսական կողմնորոշում, Աշտարակեցին թշնամական վերաբերմունք ուներ պարսկական կառավարության, նրա պաշտոնյաների, Երևանի խանի նկատմամբ։ Նա հանդիմանում էր այն հային, ով դրական կարծիք կամ լավ պատկերացում ուներ սարդարի մասին։ Ուշագրավ փաստաթուղթ է եղբորը՝ Կարապետին գրած նրա նամակը, որում հանդիմանական խոսքեր է ուղղել

---

[1] *Մաշտոցի անվ. Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 55։*

[2] *Նույն տեղում, վավ. 1014։*

[3] *Նույն տեղում։*

վերջինիս՝ սարդարի վերաբերյալ պաշտպանողական նամակ գրելու կապակցությամբ[4]։

Ներսեսը ոչ միայն իր ատելությունն է հայտնում սարդարի և Հասան խանի նկատմամբ, այլև խորհուրդ է տալիս կաթողիկոսին՝ չհավատալ աթոռի պաշտպանության համար արած նրանց խոստումներին[5]։

Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումից հետո ռուսաց կառավարությունը խուսափում էր պարսիկների հետ միջադեպեր առաջացնող առիթներից կամ այնպիսի գործողություններից, որոնք պարսիկների մոտ կասկածների տեղիք կտային։ Այդ խնդրին այլ կերպ էր նայում Ներսեսը։ Նա ցանկանում էր ռուս-պարսկական մի նոր բախում, իմանալով, որ ռազմական գործողությունների վայրը լինելու է Հայաստանը։ Այդ բախման ցանկալի հետևանքը Ներսեսը համարում էր պարսկական դարավոր լծից Արևելյան Հայաստանի ազատագրումը։

Թեև Ներսեսի վերաբերմունքը պարսիկների նկատմամբ բացահայտ էր, այնուհանդերձ, նա չէր խուսափում պարսից ղեկավար շրջանների հետ նամակագրական կապերից, որոշ բանակցություններից։ Այսպես, օրինակ, 1823 թ. նոյեմբերին աթոռի ծանր վիճակը թեթևացնելու հույսով, նա Աբաս Միրզայի մոտ է ուղարկում Տաթևի Մարտիրոս արքեպիսկոպոսին[6]։

Ներսես Աշտարակեցու գործունեությունը համակողմանիորեն ծավալվեց 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ։ Այս շրջանում ավելի ցայտուն դրսևորվեց նրա ռուսական կողմնորոշումը, ժողովրդի ու հայրենի երկրի հետ բազմաթիվ թելերով կապված լինելը։ Ուշագրավ է ռուս ռազմական պատմաբան Պոտտոյի՝ Ներսեսին տված գնահատականը.

«...Ներսեսի ներկայությունը ռուսական բանակում ոգևորում էր հայ ժողովրդին, հասցնելով նրա հայրենասիրական ոգին մինչև հերոսական սխրագործության և անձնազոհության, որը զարմացնում էր հենց իրեն՝ թշնամուն»[7]։

Աշտարակեցին սպասում էր այդ պատերազմին, սպասում էր հայրենի երկրի ազատագրության հույսով, ավելի հեռուները տանող ակնկալություններով։ Նա իր ժամանակի մի շարք հայ գործիչների նման կարծում էր, որ ռուսական զենքի հաջողությունը ոչ միայն կնպաստի Արարատյան աշխարհի ազատագրմանը, այլև հայկական թագավորության վերականգնմանը։ «Առաւել է և յոյս մեր՝ թէ հրաման կայսերական եղիցի փառաւոր մինչև յոյժ, և սուր նորա սրեալ օրհնութեամբ երկնից զարթիցէ հանդիսապէս ի ցուցանել հակառակորդաց զհատուցումն արժանաւոր յաւերժական յիշատակաց՝ որով և տէրութիւն մերոց հայրենեաց նորոգեսցի՝ ի փառս տան և օծելոյ Նորայ»[8],— այսպես է գրում նա Եփրեմ կաթողիկոսին 1826 թ. հուլիսի 23-ին։

Ներսեսը ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ողջ ընթացքում կոչերով դիմում էր հայերին, ոգևորում նրանց, բացահայտում այն հսկայական օգուտը, որ հայ ժողովրդին բերելու է ռուսական զենքի հաջողությունը։ Միաժամանակ պահանջում էր՝ համակողմանի օգնություն ցույց տալ ռուս զինվորներին, հավատարիմ մնալ ռուսաց դահին։ Նա տպագիր թղթեր ուղարկեց Գորու

---

4 Նույն տեղում, վավ. 1139։

5 Նույն տեղում, թղթ. 164բ, վավ. 1280։

6 Նույն տեղում, թղթ. 165, վավ. 795։

7 Потто. Кавказская война, т. III, СПб., 1886, էջ 296։

8 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 331։

Ստեփանոս քահանա Տեր-Ստեփանյանին[9], Հաղբատի շրջանի գործակալ Մարտիրոս քահանա Ջաղինյանին[10], առաջարկելով կարդալ դրանք ժողովրդի առաջ՝ բարձրացնելու համար նրա հավատարմությունը կայսեր նկատմամբ։ Իսկ Սղնախի հայ հասարակությանը հորդորում էր՝ չշեղվել ռուսաց գահի հանդեպ ունեցած հավատարմությունից և ցուցաբերել ջերմ հայրենասիրություն[11]։

Դարասկզբին ռուսական տիրապետության տակ անցած հայկական շրջանների հայ բնակչությունը ռուսաց զորքին օգնում էր ոչ միայն նյութապես, այլև մասնակցում էր պարսիկների դեմ պատերազմական գործողություններին։ Այդ բանին, անշուշտ, տեղյակ էր Ներսեսը, և նրան շարունակաբար տեղեկություններ էին հաղորդվում յուրաքանչյուր անց ու դարձի վերաբերյալ։

Ահա մի ուշագրավ փաստաթուղթ՝ Շամշադինի արքեպիսկոպոսին Ներսես Աշտարակեցու ուղարկած նամակը։ Փաստաթղթից հայտնի է դառնում, որ եպիսկոպոսը խնդրանքով դիմել է Ներսեսին՝ Շամշադինի հայերին (զինվորագրված) միացնել կամ ռուսաց բանակին, կամ Ղազախի հայերին, որպեսզի նրանք «լինիցին բազկակից զօրաց ռուսաց»[12]։ Նամակով Ներսեսը տեղեկացնում էր, որ խնդրանքի մասին հայտնված է Երմոլովին ու հորդորում էր հետևյալ խոսքերով. «Հապա՝ յայտնեա՛ ամենայն մերազանց սրբազան եղբայր, և քարոզեա նոցա զօրանալ հզօրանալ ընդդեմ ամենայն թշնամեաց, և առաւել ևս արիանալ, և ըստ հաւատարմութեան իւրեանց ջերմեռանդութեամբ բազմաւառաջադեմ հանդիսանալ, և պատրաստել զանձինս բազմութեամբ հեծելոց լինել բազկակից զօրաց, և դիմել յերկիր հայրենեաց ի Հայաստան աշխարհ, ի խնդրել զվրէժ իրաւանց մերոնց նախնեաց և նոցին ժառանգաւորաց»[13]։ Ներսես Աշտարակեցին հորդորում էր հայ ժողովրդին՝ դիմել ակտիվ գործողությունների, նաև զենքով նպաստել ռուսական զորքի առաջխաղացմանը։

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը սկսվեց հանկարծակի, և սկզբում թեև ռուսական զորաջոկատների դրությունը բավականին աննախանձելի էր, սակայն Աշտարակեցին կանխազգում էր ռուսների մոտալուտ, անխուսափելի հաջողություններն ու լավագույն ակնկալություններ ուներ ոչ հեռավոր ապագայի նկատմամբ։ Նա ուրախանում էր, երբ ընթերցում էր Լոռվա բնակչության խորհրդածությունը. «...թէ յօժարութեամբ հոգւոյ և մարմնոյ մատնեմք զորդիս և զընտանիս մեր ի մահ. ի փառս կենսատու սուրբ խաչին, և ի սեր ամենողորմած տէրութեան ռուսաց»[14] և ոգևորում էր նրանց պատերազմի հետ կապված հույսերով[15]։

Ներսեսը, լավատեղյակ լինելով ռուսների նկատմամբ հայերի ունեցած հավատարմությանը, իր շրջաբերականներով և նամակներով բարձր էր գնահատում նրանց ազգօգուտ վարմունքը և վստահեցնում էր, որ կառավարությունը և հոգևոր իշխանությունները այդ հավատարմությունն անուշադիր չեն թողնի։ «Հաւատարմացուցանեմք և մեք, մերովս առանձնական հոգևոր և սուրբ պարտաւորութեամբ, զի ոչ մեք, և ոչ նորին Աստուածարեալ օծութիւն Սրբազ-

9 Նույն տեղում, վավ. 606։
10 Նույն տեղում, վավ. 602։
11 Նույն տեղում, վավ. 607։
12 Նույն տեղում, վավ. 625։
13 Նույն տեղում, վավ. 607։
14 Նույն տեղում, վավ. 628։
15 Նույն տեղում։

նագոյն Արհոյն մեր և հոգելի Հայրապետն ամենայն հայոց՝ չունիմք անհոգանալ երբէք վասն ձեր ամենայն ոչ այժմ և ոչ յապայս, և յոյս կատարելագոյն միխիթարութեանց ազգի մերոյ եղելոց ընդ քաղցրագոյն հովանաւորութեամբ առատախնամ կայսրութեան ամենայն ռուսաց անմահ է ի մեզ երեկ և այսօր և յաւիտեան»[16]։ Այսպես է նա իր գոհունակությունը հայտնում Շամախի քաղաքի և նահանգի հայ բնակչությանը։

1826 թ. օգոստոսին Կովկաս է ժամանում գեներալ Պասկևիչը։ Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Ելիզավետպոլի ճակատամարտը, որը պսակվեց ռուսների փայլուն հաղթանակով։

Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատարի պոստում Երմոլովի մնալու հարցը արդեն վճռված էր[17]։ Պարսկևիչը Կովկաս էր ուղարկվել Երմոլովին փոխարինելու նպատակով։ Այս ակտի նկատմամբ Աշտարակեցու կարծիքը դրական չի եղել։ Այդ կապակցությամբ նա իր վերաբերմունքն է հայտնել Հովակիմ և Խաչատուր Լազարյաններին գրած նամակում[18]։ Նամակը գրվել է 1826 թ. սեպտեմբերի 13-ին, Ելիզավետպոլի ճակատամարտի օրը։ Նշանակում է մինչ այդ նամակի հեղինակին հայտնի է եղել Պասկևիչին կորպուսի գլխավոր հրամանատար նշանակելու ծրագիրը։

Հարց է ծագում, արդյոք Պասկևիչը իմացե՞լ է Ներսեսի կարծիքը իր մասին, և այն որևէ դեր խաղացե՞լ է նրանց անձնական հարաբերությունների մեջ։ Հայտնի է, որ հետագայում Պասկևիչի և Ներսեսի հարաբերությունները լարվում են, և վերջինս աքսորվում է Բեսարաբիա։ Հնարավոր է, որ այս գործում իր դերն է ունեցել նաև սուբյեկտիվ պարագան, չնայած պարզ ու հասկանալի են Աշտարակեցու աքսորման քաղաքական հանգամանքները։

Պասկևիչի գլխավոր հրամանատար նշանակվելուց հետո էլ Աշտարակեցին մնաց ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպան և եռանդուն գործիչ։ Ահա Ներսեսի մի նամակը՝ ուղղված Երևանում գտնվող Բարսեղ աղա Գաբրիելյանին. «...Հասեալ է ժամանակ և իզուր են յայսմհետէ այն ամենայն կարծիք, թէ Ցիցիանովն եկն և վերադարձաւ. գրաֆ Կուտուզովն եկն և վերադարձաւ. այլ ես այժմ ասեմ ձեզ, որ ոչ անադան այժմ գայ առձեզ բարձր փառաւորագոյն և անցանէ ի Դաւրէժ և անտի յառաջ դուցէ ի Թէհրան»[19]։

Աշտարակեցու հավատը ռուսների հաղթանակի նկատմամբ անսասան էր։ Սակայն նա մեծ նշանակություն էր տալիս ռուսական զորքին հայերի կողմից կանոնավոր զինված օգնություն ցույց տալու գործին։ Իր իսկ անմիջական ղեկավարությամբ 1827 թ. դարձանը Թիֆլիսում կազմակերպվում է հայկական առաջին կամավորական ջոկատը։ Ապա կամավորական ջոկատներ ստեղծելու գործը թողնելով իր համախոհներին (հիմնականում Ալամդարյանին)՝ Թիֆլիսի զինվորական նահանգապետ Սիպյագինի գլխավորությամբ ինքը 1827 թ. ապրիլի 2-ին գեներալ Բենկենդորֆի առաջապահ զորաբաժնի հետ շարժվում է դեպի Երևան։ Արարատյան երկիրը Ներսեսը տեսնում է ամայացած, բնակչության մի մասը՝ բշված «ի դաւառն Պայազիտոյ»[20]։

---

16 Նույն տեղում։

17 АКАК, т. VI, ч. I, էջ IX։

18 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 638։

19 Նույն տեղում, վավ. 721։

20 Նույն տեղում, վավ. 772։

էջմիածինը ռուսների կողմից գրավվելուց հետ դառնում է ոչ միայն ռազմական կայան, «այլև մի տեսակ վարչական կենտրոն, ուր քաղաքական իշխանության գործունեությունը, Պասկևիչի կարգադրությամբ, իր ձեռքն էր առել Ներսես Աշտարակեցին»[21]։ Հավանաբար էջմիածնում այս ընթացքում Աշտարակեցու ծավալած գործունեությունն ի նկատի ուներ Աբաս Միրզան, երբ Գրիբոեդովի հետ ունեցած զրույցի ժամանակ ասում էր. «Դուք (ռուսներդ— Կ. Հ.) հայերին մեր դեմ գրգռելու համար էջմիածին ուղարկեցիք քրիստոնեական խալիֆ Ներսեսին»[22]։

Դեռևս 1826 թ. հուլիսի 29-ին Ներսեսը դիմել էր Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Ղարաբաղի, Շամախու, Բաքվի, Դերբենդի և այլ քաղաքների ու գյուղերի հայ բնակչությանը, կոչ անելով ամենուրեք նպաստել ռուսական զորաջոկատների գործողություններին, «սկետք լինելու դեպքում չխնայել արյան վերջին կաթիլը»[23]։ Իսկ այժմ Երևան և Նախիջևան քաղաքների և դրանց շրջակա հայ բնակչությանը ուղղած շրջաբերականում Աշտարակեցին հաստատ համոզվածություն է հայտնում, որ այս անգամ Երևանի և Նախիջևանի խանությունները պարսիկներին չեն թողնվելու, քանի որ իրադրությունը այժմ այլ է. «Գիտեմ, զի ըստ որում այս վեցերորդ է յառաջանալն զօրաց ռուսաց, մինչև ի սահմանս Երևանու և Նախիջևանու՝ տարակուսեցուցանել զձեզ մեծապէս իրաւացի կարծիք որ կարէ յառաջանալ յամենեսին ի ձեզ ի նախանցեալ փորձոց անտի, սակայն՝ կարօղ էք դուք իսկ զանազանել ինքնին ի մէջ այն ամենայն անցելոցն զօրաշարժութեանց ռուսաց և այսմ ներկայ յահեղ պատերազմաց...»[24]։

Սարդարապատի գրավումից հետո, երբ օրերի հարց էր Երևանի առումը, Ներսեսը դիմում է Աշտարակ և Օշական գյուղերի բնակչությանը, կոչ անելով՝ զենքի ընդունակ յուրաքանչյուր ոք թող միանա ռուսաց զորքին, պարսիկների դեմ. «Գրեմ բազում օրհնութեամբ, զի ընդ ժամանեալ գրոյս իսկոյն առանց բոպէ անցուցանելոյ՝ թողեալ զամենայն զհարկաւոր գործս ձեր պատկանեալս վասն տան և ընտանեաց ձերոց՝ ամենայն թուանք ունեցողքն ի ձէնջ, և ի թուանք չունեցողացն ևս ոտնաւոր կտրիճ տղայք շատ հաւաքեան հասուսջիք առ մեզ աստ՝ մինչև ցմտանել արեգականն այսօր որ է չորէք շաբաթ և քսան և ութ սեպտեմբերի, և եթե միոն ի ձէնջ ծուլասցի... իմասցի այնպիսին որ երէ իմ աչաց լոյս ևս լինիցի ոչ խնայեցից հանել և ի բաց ընկենուլ»[25] (ընդգծումը մերն է— Կ. Հ.)։ Նույն բովանդակությունն ունի էջմիածին՝ Հովսեփ վարդապետին Աշտարակեցու հղած նամակը[26]։

1827 թ. սեպտեմբերի 20-ին ռուսները գրավում են Սարդարապատը, իսկ 10 օր անց ընկնում է պարսկական սատրապության վերջին հենարանը Անդրիկովկասում՝ Երևանի բերդը։ Երևանի գրավումը ցնծություն էր ողջ հայության համար։

Այս նշանավոր ակտի վերաբերյալ իր ուրախությունն է արտահայտել նաև Աշտարակեցին։ Եղիազար Լազարյանին 1827 թ. հոկտեմբերի 6-ին գրած նամակում կարդում ենք. «Ահա գոհանամք զգթութեանց և զմեծ ողորմութեանց

---

21 Լեո, Հայոց պատմություն, մասն երկրորդ, ձեռագրի իրավունքով, Երևան, 1927, էջ 94

22 АКАК, т. VII, էջ 551։

23 ЦГИА, ф. 880, оп. 5, д. 18, թ. 2—7։

24 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 785։

25 Նույն տեղում, վավ. 818։

26 Նույն տեղում, վավ. 819։

խնամակալին իւրոց արարածոց, զի ոչ յաւիտեան անտես արարեալ զաշխարհ հայրենից Հայաստանի՝ զտուն նախահորն աշխարհի Նոյի մեծի Նահապետի՝ և հայրապետի հայոց Հայկայ դիւցազնի՝ ամենահայեաց բարերար ակնարկութեամբ փրկեաց սքանչելապէս զերկիր արարատեան՝ զմեծ Հայաստան՝ և զգեբազահ Աթոռն ամենայն հայոց սուրբ կաթողիկէ էջմիածին ի հազարամեայ տառապանաց կամ որպէս յարմար է ասել ի դժոխատագնապ գերութիւնից և յանօրէն բռնակալութիւնից բարբարոսաց»[27]։

Ռուս-պարսկական պատերազմի ողջ ընթացքում հայերը անշահախնդիր և բազմակողմանի օգնություն էին ցույց տալիս Հայաստանի տերիտորիայում կռվող ռուսական բանակին։ Ներսես Աշտարակեցին գտնում էր, որ ռուսաց զորքին ամենօրյա պատշաճ օգնություն ցույց տալը յուրաքանչյուր հայի բարոյական պարտականությունն է. Երևանից Էջմիածնի վանքի կառավարիչ Եփրեմ արքեպիսկոպոսին պատվիրում էր, որ բնակության համար ռուս զինվորներին գոմ չառաջարկի, «այլ տուր նոցա զվերնայարկ սեղանատանն կամ զմերձ նմին եղելս, թէ կայցէ այնպիսի զոր նոքա խնդրեն»[28]։

Ցարական Ռուսաստանը Անդրկովկասում վարում էր նվաճողական քաղաքականություն, որը, սակայն, օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի կենսական շահերին, պարսկական լծից ազատագրվելու նրա ձգտմանը։ Այդ էր պատճառը, որ ռուսական զորքին հայերը ամենուրեք դիմավորում էին ցնծությամբ, որպես ազատարարի։ Երևանի գրավման մասնակից, դեկաբրիստ Լաչինովի օրագրում գեղեցիկ պատկերներ կան այդ մասին. «Ուրախության հուզիչ տեսարան էր, որ մեզ դիմավորում էին հայկական ընտանիքները, երբ մենք գրավեցինք այն (Երևանը— Կ. Հ.), աննկարագրելի էր»[29]։ Լաչինովի աչքից չի վրիպել ռուսների նկատմամբ հայերի տածած բարեկամական անկեղծ զգացմունքն ու համակրանքը. «...Ինչ վերաբերում է հայերին, վճռականապես կարելի է ասել, որ նրանք անկեղծորեն նվիրված են ռուսներին»[30]։ Լաչինովը 7-ը հունվարի 1828 թվակիր մի վավերագրում ահա թե ինչ է գրում Ներսես Աշտարակեցու մասին. «Հայեր, դուք զգում եք ձեր երջանկությունը, բայց ձեր հայրենակիցներից ո՞վ էր որ պատերազմի ողջ ընթացքում հոգ տարավ այն ձեզ պարգևելու համար, ո՞վ եղավ հաղթողներին աջակցողը։

Արքեպիսկոպոս Ներսեսը։ Նրա կյանքը նվիրված է ձեր բարօրությանը։ Նրա արժանապատվությունը, բարյացակամությունը ձեր հաջողության երաշխիքը դարձան»[31]։

Ներսես Աշտարակեցուն զբաղեցնում էր կենսական մի հոգս ևս։ Դա պարսկահայերին Արաքսից այս կողմ գաղթեցնելու հոգսն էր։

Հայտնի է, որ Թուրքմենչայի հաշտության պայմանագրում Ռուսաստանը մտցրեց հատուկ հոդված (15-րդ) քրիստոնյաների գաղթի վերաբերյալ։ Ելնելով Աշտարակեցու՝ 1827 թ. հոկտեմբերի 6-ին Եղիազար Լազարյանին գրած

---

27 Նույն տեղում, վավ. 821։

28 Նույն տեղում, վավ. 833։

29 М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга I, Ереван, 1956, Документы..., էջ 359։

30 Նույն տեղում, էջ 361։

31 ЦГАДА, ф. 1225, оп. 1, д. 529, л. 5։

նամակի բովանդակությունից, դժվար չէ ենթադրել, որ գաղթի հարցը պայմանագրի հոդված դառնալու գործում բավական ջանք է թափել ինքը՝ Ներսես Աշտարակեցին[32]։ Նշենք, որ այդ խնդրում խոշոր է ռուս մեծ գրող Ա. Գրիբոեդովի դերը, որի մասին բազմիցս գրված է հայ և ռուս գրականության մեջ։

Հայերի գաղթեցումը Աշտարակեցին համարում էր լուրջ հարց։ «Այնուամենայնիւ զոր մեքս գիտեմք, ոչ անդէպ համարիմք յայտնել. զի փրկութիւն հայրենեաց Հայաստանի յայնժամ եղիցի ապահով, յորժամ բազմասցին ի Հայաստան ի գաւառն Արարատեան ի Նախիջևան, ի Փայտակարան և յամենայն եզերս սահմանաց այսոցիկ ազգք հայոց...»[33]։ Նա խնդրին տալիս էր թե՛ քաղաքական, և թե՛ տնտեսական նշանակություն։

Դեռ 1827 թ. դեկտեմբերին Աշտարակեցին գիտեր արդեն, որ ռուսաց սահմանը Արաքսից այն կողմ չի անցնելու, և պատվիրում էր Նախիջևանի Բարսեղ եպիսկոպոսին՝ քանի դեռ ռուսաց բանակը ետ չի քաշվել, համոզել ժողովրդին՝ անցնել Արաքսը և բնակություն հաստատել Արարատյան դաշտում[34]։ Պարսկահայերի գաղթը կազմակերպելու նպատակով Աշտարակեցին դիմում է գործնական քայլերի։ Նա գտնում էր, որ այդ խնդիրը դյուրացնելու համար անհրաժեշտ է գործակալներ ունենալ Պարսկաստանում ու որոշում է Պարսկաստան ուղարկել Ստեփանոս արքեպիսկոպոսին և Հովսեփ վարդապետին։ Իր այս մտահղացումը Հովսեփ վարդապետին է հայտնում 1827 թ. դեկտեմբերի 18-ին վերջինիս գրած նամակում. «Խորհուրդք իմ յուզեցին զկամս իմ յղել զձեզ ընդ Ենոքեանին ի Թէվրիզ և կարգել զձեզ հրաւիրակ հայկազանց եղելոց ընդ ամենայն սահմանս այնոցիկ կողմանց. և թէպէտ գիտեմ զի պիտոյէք մեզ յաթոռն, այլ զի աթոռն առանց ազգի ոչ կարէ լինել Աթոռ, հարկաւոր համարիմ զօգուտն ձեր յաթոռն փոխարկել յօգուտ ազգին, որոց պարտականն եմք առհասարակ ամենայն հոգևորականք...»[35]։

Պարսկաստան հրավիրակներ (գործակալներ) ուղարկելու հետ միասին Աշտարակեցին շրջաբերականներով դիմում էր պարսկահայ ազգաբնակչությանը, հորդորում նրանց՝ գաղթել Արաքսից այս կողմը՝ Երևան, Նախիջևան, Ղարաբաղ։ Այդ շրջաբերականները գրված են կուռ տրամաբանությամբ, հայոց պատմության առանձին հարցերի ճիշտ վերլուծությամբ և ջերմ ռուսասիրությամբ։

Ներսեսը զայրույթով դատապարտում է այն հայերին, որոնք իրենց ինչքը ավելի բարձր են դասում, քան անձնական ազատությունը[36]։ Այդ առումով Մակաբերդի և պարսկական այլ գյուղերի հայությանը առաջարկում է՝ հանուն իրենց և իրենց սերունդների ազատության՝ առ ոչինչ համարել ունեցվածքը՝ մուլքը, կայքը և գաղթել[37]։ Ուշագրավ է Աշտարակեցու գրությունը՝ հղված Մակուի Միքայել ավագ քահանային, Հակոբ և Առաքել քահանաներին, ուր պախարակում է նրանց գաղթել չցանկանալը և որպես հոգևոր հայր խորհուրդ է տալիս՝ ժամանակ չկորցնել և հանուն ազատության ու ապագա բարօրության

32 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 822։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, վավ. 912։
35 Նույն տեղում, վավ. 913։
36 Նույն տեղում, վավ. 1060։
37 Նույն տեղում, վավ. 1119։

անցնել «Երասխի այս կողմը»[38]։ Իսկ Ուրմիայի Ջամալա գյուղի հայ հասարակության՝ իրենց անշարժ կայքից բաժանվել չցանկանալու տրամադրությունն արտահայտող նամակին նա պատասխանում է. «Գիր ձեր եհաս առ իս և իմացայ ձեր դրեալն վասն ձեր մլքիցն. բայց դուք որ մարդ էք և քրիստոնեայ էք՝ դուք ևս լաւ գիտէք որ մուլքն մարդոյ համար է ստեղծած Աստուած. այլ մարդն մլքի համար չէ ստեղծած»[39]։

Եթե Ներսեսը պախարակում էր գաղթել չցանկացողներին, ապա արդեն գաղթածներին նա օրհնության գիր էր հղում, հուսադրում լավ ապագայի ակնկալությամբ։ Ինչ խոսք, նա հաշվի էր առնում գաղթի հետ կապված դժվարությունները, ժամանակի պայմանները, գաղթականներին տեղավորելու պրոբլեմը։ Ցարական կառավարությունը միջոցներ էր տրամադրել, բայց դրանք չնչին էին։ Աննշան դրամական օգնություն էր տրվում ծայրահեղ չքավորներին։ Կային լուրջ դժվարություններ, եղան մահացության շատ դեպքեր[40]։

Ցարական կառավարությունը, վերջացնելով պատերազմը և կնքելով իր համար ձեռնտու Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը, Անդրկովկասում այլևս չէր զգում այնպիսի գործչի կարիքը, ինչպիսին Աշտարակեցին էր։ Ներսեսի հեռացումը Անդրկովկասից նրա և Պասկևիչի անձնական հարաբերություններով բացատրելը սխալ է։ Այն բխում էր Անդրկովկասի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականությունից։ Ներսեսը այժմ ցարիզմի համար վրտանգավոր մարդ էր համարվում, նրա հեռացման համար պատրվակ էր փընտրվում։ Առիթը շուտով ներկայացավ. սկսվեց ռուս-թուրքական պատերազմը (1828—1829 թթ.)։ Աշտարակեցու Բեսարաբիա ուղարկվելը պատճառաբանվում էր նրա եռանդով, ռուսական զորքի առաջընթացի համար նրա ծավալելիք նպաստավոր գործունեությամբ, քանի որ Բեսարաբիայի սահմանամերձ բնակավայրերում կային շատ հայեր։ Բայց չէ որ ռուս-թուրքական պատերազմը ուներ նաև կովկասյան ճակատ։ Այստեղ ավելի շատ հայեր էին ապրում, քան Բեսարաբիայում կամ նրան հարող թուրքական սահմաններում։

Ներսեսի Բեսարաբիա ուղարկվելը ուներ քաղաքական պատճառներ։ Եվ պատահական չէր, որ վերջինիս Բեսարաբիայում գտնվելու հատկապես առաջին շրջանում Ռուսաստանի կենտրոնից գաղտնի գրություններ էին ուղարկվում Քիշինև՝ նրա վրա առանձին հսկողություն սահմանելու[41], իսկ գրագրությունները՝ ուշադիր ստուգելու պահանջներով[42]։

Ներսես Աշտարակեցին, անշուշտ, հասկացավ ցարիզմի կողմից իր նկատմամբ գործադրված քաղաքական այդ քայլի նպատակները։ Աքսորվելուց քիչ ուշ, 1830 թ. հունիսի 9-ին Քիշինևից Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին գրած նամակում պարզորոշ ակնարկներ կան Անդրկովկասից իրեն հեռացնելու պատճառների մասին[43]։

---

38 Նույն տեղում, վավ. 1122։

39 Նույն տեղում, վավ. 1099։

40 Ա. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա. Թիֆլիս, 1894, էջ 333։

41 АВПР, ф. Армянские дела, д. 4, л. 17։

42 Նույն տեղում, թ. 1։

43 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 167ա, վավ. 330։

ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ И НЕРСЕС АШТАРАКЕЦИ

К. М. ОГАНЕСЯН

(Резюме)

На основе архивных материалов в статье показывается русская ориентация и активная политическая деятельность Нерсеса Аштаракеци в период русско-персидской войны 1826—1828 гг.

Будучи горячим сторонником России, Аштаракеци обращался и устно и письменно к армянскому народу оказать всяческую помощь русским войскам, принимал активное участие в организации армянских добровольческих отрядов и т. д. Нерсес Аштаракеци был глубоко убежден в том, что освобождение армянского народа от невыносимого ига ханов и беков возможно только при помощи России.